

# **Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>>**

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

**<<ՉՈՐԱՄԱՍԵՐԻ ԵՎ ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱԿԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՀՈՂՎԱԾ 1.** <<Չորամասերի և գինվորական հաստատությունների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության 2015 թվականի հունիսի 22-ի ՀՕ-99-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում <<լրատվական>> բառից հետո լրացնել <<կամ մարզական կամ հանգստի կազմակերպման>> բառերով:

**ՀՈՂՎԱԾ 2.** Օրենքը լրացնել 7.1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

**<<ՀՈՂՎԱԾ 7.1. ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՆԳՍՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մարզական կամ հանգստի կազմակերպման բնույթի գինվորական հաստատությունները (այսուհետ՝ գինվորական մարզական կամ հանգստի կազմակերպման հիմնարկներ) ստեղծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:
2. Զինվորական մարզական կամ հանգստի կազմակերպման հիմնարկ ստեղծելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում են հիմնարկի՝

1) անվանումը.

2) գտնվելու վայրը.

3) գործունեության առարկան և նպատակները, իրականացվող վճարովի ծառայությունների տեսակները:

3. Զինվորական մարզական կամ հանգստի կազմակերպման հիմնարկ ստեղծելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման հիման վրա՝ ստեղծված հիմնարկի կանոնադրությունը,

գործունեության առարկային և նպատակներին համապատասխան խնդիրներն ու գործառույթները, կառուցվածքը, թվաքանակը, հանձնվող (ամրացվող) գույքի կազմը հաստատվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով: Չինվորական մարզական կամ հանգստի կազմակերպման հիմնարկները կարող են իրականացնել վճարովի ծառայություններ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով, պայմաններով և չափերով: Չինվորական մարզական կամ հանգստի կազմակերպման հիմնարկին կարող է տրվել զորամասի պայմանական համար:

4. Չինվորական մարզական հիմնարկները կարող են գործել մարզական ակումբների, իսկ հանգստի կազմակերպման հիմնարկները՝ հանգստյան տան տեսքով: Չինվորական մարզական կամ հանգստի կազմակերպման հիմնարկները լիցենզավորման ենթակա գործունեությամբ կարող են զբաղվել օրենքով սահմանված կարգով տրված լիցենզիայի հիման վրա:
5. Չինվորական մարզական կամ հանգստի կազմակերպման հիմնարկների գործունեության նկատմամբ տարածվում են սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված՝ զորամասերի գործունեությանը ներկայացվող պահանջները: Չինվորական մարզական կամ հանգստի կազմակերպման հիմնարկների կարիքների համար գնումները կատարվում են §Գնումների մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
6. Չինվորական մարզական կամ հանգստի կազմակերպման հիմնարկներում զինվորական ծառայության կազմակերպման, զինվորական կամ պետական այլ ծառայություն անցնելու, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են օրենքով և հիմնարկի կանոնադրությամբ:>>:

**ՀՈԴ-ԱՄԾ 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: